

ՍՐՔԱԶԱՆ ՀՕՐ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ՍՈՒՐՔ ԱՐԳԱՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՍԱՐԿԱԲԱԳԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Փետրուար 20-21, Առաջնորդ Սրբազան Հայրը հովուական այցելութիւն տուաւ Աքացտէլլի մէջ, Արիզոնայի մէջ նոր կառուցուած Սուրբ Արգար Հայց. Եկեղեցւոյ:

Շաբաթ երեկոյեան Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Վարդանանց Ջօրավարաց նուիրուած տօնախմբութիւնը, որ սքանչելի կերպով կազմակերպուած էր Տիկին Հուրի Տիգրանեանի, «Հայ Ուղի»ի Յայտագրի Վարիչ Եւ Վարդանանց Յանձնախումբի կողմէ:

Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը՝ գնահատելով յայտագրին մաս կազմողները եւ կազմակերպողները եւ հանդիսականները, որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին մեր նուիրեալ գնահատակներն ու սուրբերը: Ապա Պահքի ընթրիք հրամցուեցաւ ներկաներուն, որ պատրաստուած էր «Հայ Ուղի»ի Տիկիններուն կողմէ:

Յաջորդ օրը, «Արտաքսման Կիրակի»ի առթիւ Առաջնորդ Սրբազան Հայրը Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց: Սուրբ Սեղանին սպասարկեցին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Զաքարիա Քինյ. Սարիբէկեան եւ Սարկաւազները: Տէր Հօր, Սարկաւազաց եւ Դպրաց Դասի մասնակցութեամբ, Սրբազան Հայրը Սարկաւազ ձեռնադրեց Պերճ Մանուկեանը: Իր քարոզին մէջ շնորհաւորեց նոր Սարկաւազը եւ շեշտեց անոր անձնուէր ծառայութեան ոգին, որուն ծանօթ է համայնքը: Սրբազան Հայրը այս առթիւ գնահատեց Տէր Զաքարիային, Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան եւ յարակից կազմակերպութիւններուն, Սարկաւազներուն, Դպիրներուն եւ երգչախումբին նուիրեալ ծառայութիւնները եւ իր օրհնութիւնները բաշխեց անոնց:

Սուրբ Պատարագի աւարտին Սրբազան Հայրը յատուկ ժամանակ տրամադրեց եւ հանդիպում ունեցաւ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան հետ: Տէր Հայրը բարձր գնահատութեամբ Սրբազան Հօր ծանօթացուց Սանահին Արապեանը, որ իր անձնական ջանքերով եւ հետապնդումներով աւելի քան 2,000 Տոլար հանգանակած եւ առաքած է Հայաստանի որբանոցներէն մէկուն: Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց եւ օրհնեց զինք՝ իր կատարած բարեգործութեան համար եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց: